Արձանագրություն N 3
ՋԿ-ԳՀԾՁԲ-22/1-ՆԱ ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 27 հոկտեմբերի 2022թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Օհանջանյանը
Հանձնաժողովի անդամներ Է. Մխիթարյանը, Մ. Տեր-Պետրոսյանը և Գ. Մելիքսեթյանը:
Քարտուղար՝ Ա. Սարգսյանը:

Մասնակից ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության վերաբերյալ

Ջրային կոմիտեի կարիքների համար **ներքին աուդիտի ծառայությունների** գնման **ՋԿ-ԳՀԾՁԲ-22/1-ՆԱ** ծածկագրով ընթացակարգի մասնակից «Սմարտ Աուդիտ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է պահանջված փաստաթղթերը:

Ընթացակարգի մասնակից «Սմարտ Աուդիտ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են անհրաժեշտ փաստաթղթերը:

Հանձնաժողովի որոշումը

Հանձնաժողովը որոշեց.

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 40-րդ կետի 5)-րդ ենթակետը, ինչպես նաև **ՋԿ-ԳՀԾՁԲ-22/1-ՆԱ** ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.6 և 8.7 կետերը՝ ընթացակարգի մասնակից «Սմարտ Աուդիտ» ՍՊԸ-ին, հրավիրել գների նվազեցման շուրջ բանակցությունների, որը տեղի կունենա **04.11.2022 թվականին ժամը 11:30-ին**, Ջրային կոմիտեի շենքում (ք. Երևան, Վարդանանց 13ա 3-րդ հարկ նիստերի դահլիճ):

Բանակցությունների համար ներկա մասնակցի կողմից նվազագույն գին ներկայացնելու նպատակով կտրամադրվի 3 (երեք) րոպե ժամանակ, որի ընթացքում կարող են լինել գնի իջեցումներ և դրանք կարող են բարձրաձայնվել ինչպես մասնակցի, այնպես էլ, եթե փոխանցվել է հանձնաժողովի նախագահին՝ հանձնաժողովի նախագահի կողմից: Բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին մասնակցի կողմից նվազագույն գնային առաջարկը սահմանված ձևաչափով կփոխանցվի գնահատող հանձնաժողովի նախագահին, որը կհամարվի վերջնական: Վերջինիս կողմից դրանք կբարձրաձայնվեն, իսկ գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից կներկայացվեն էլեկտրոնային աղյուսակի տեսքով: Բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ մասնակցի ներկայացրած գնի, հրավերով սահմանված չափանիշների գնահատման հիման վրա որոշվում ու հայտարարվում է ընտրված մասնակից:

Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստ հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա:

Ընդունվել է՝ որոշում՝ կողմ-4, դեմ-0
Գնահատող հանձնաժողովի՝

Նախագահ		Վ. Օհանջանյան
անդամներ		Է. Մխիթարյան
		Մ. Տեր-Պետրոսյան
		Գ. Մելիքսեթյան
Քարտուղար		Ա. Սարգսյան